

ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետների ,առաջին կարգի մասնագետի թափուր պաշտոնները զբաղեցնելու համար :

1.ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ/ ծածկագիր 3.1-2 / :

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ կատարում է համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման ցանցերի շահագործումը,մասնակցում էդրանց շինարարության և վերանորոգման աշխատանքներին:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է համայնքի տարածքում գյուղատնտեսական մշակաբույսերի հիվանդությունների , վնասատուների և մոլախոտերի դեմ պայքարի աշխատանքները :

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է համայնքում տոհմա և սերմաբուծական աշխատանքներին:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ ապահովում է հողերի պահպանումը հողատարումից ,ողողումներից ,ճահճացումից ,քիմիական ռադիոակտիվ նյութերով և արտադրական թափոններով աղտոտումից:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-միջնակարգ կրթություն

-ՀՀ սահմանադրության,<Համայնքային ծառայության մասին>,<Տեղական ինքնակառավարման մասին>ՀՀ օրենքների ,աշխատակազմի կանոնադրության հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

2. ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջատար մասնագետ/ ծածկագիր 3.1-3/ :

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է գորակոչի ,գորահավաքների, ուսումնավարժական հավաքների իրականացման աշխատանքներին :

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ աջակցում է քաղաքացիական պաշտպանության մարմինների գործունեությանը :

Մասնակցում է համայնքի զինապարտների գրանցամատյանի օրենքով սահմանված կարգով վարման աշխատանքներին:

Իր իրավասության սահմաններում մասնակցում է գորակոչի,գորահավաքի և վարժական հավաքների կազմակերպման աշխատանքներին:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

-միջնակարգ կրթություն

-ՀՀ սահմանադրության,<Համայնքային ծառայության մասին>,<Տեղական ինքնակառավարման մասին>ՀՀ օրենքների ,աշխատակազմի կանոնադրության,<Զինապարտության մասին > և իր լիազորությունների հետ կապված

այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. ՀՀ Արմավիրի մարզի Տանձուտ գյուղական համայնքի ղեկավարի աշխատակազմի առաջին կարգի մասնագետ/ ծածկագիր 3.2-1/ :

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ օրենքով սահմանված կարգով իրականացնում է հողի հարկի և գույքահարկի գանձումը:

Աշխատակազմի քարտուղարի հանձնարարությամբ իրականացնում է տեղական տուրքերի և վճարների, համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձավճարների գանձման աշխատանքները:

Իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է `

-միջնակարգ կրթություն

-ՀՀ սահմանադրության,<Համայնքային ծառայության մասին>,<Տեղական ինքնակառավարման մասին>ՀՀ օրենքների ,աշխատակազմի կանոնադրության,<Գույքահարկի մասին > ,<Հողի հարկի մասին>և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն,ինչպես նաև տրամաբանելու տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն:

Տիրապետում է անհրաժեշտ տեղեկատվության:

Ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

Նշված թափուր պաշտոնները զբաղեցնելու համար հայտարարված մրցույթը կկայանա 2012 թ, փետրվարի 6-ին ժամը 12-ին Տանձուտի գյուղապետարանի շենքում:

Դիմող ՀՀ քաղաքացիները աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը `

-դիմում մրցույթային հանձնաժողովի անունով /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/:

-տվյալ պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետման տեսանկյունից ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի `դիպլոմի,վկայականի,աշխատանքային գրքույկի պատճենները բնօրինակի հետ միասին:

-հայտարարություններ /ձևը լրացվում է փաստաթղթերը լրացնելիս/:

-արական սեռի անձինք զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող վկայականի պատճենները ` իսկականի հետ միասին,կամ համապատասխան տեղեկանք:

-մեկ լուսանկար 3x4 չափի:

-անձնագրի պատճեն

-ՀՀ քաղաքացիները մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերը հանձնում են անձամբ ներկայացնելով անձնագիրը կամ անձը հաստատող փաստաթղթերը:

Փաստաթղթերը ընդունվում են ամեն օր ժամը 10,00 -17.00,բացի շաբաթ և կիրակի օրերից:

Դիմումների ընդունման վերջին ժամկետն է 2012 թվականի հունվարի 18-ին, Մրցույթին մասնակցել ցանկացող ՀՀ քաղաքացիները լրացուցիչ տեղեկություններ ստանալու, ինչպես նաև պաշտոնի անձնագրի և հարցաշարերին ծանոթանալու համար կարող են

դիմել Տանձուտի գյուղապետարանի աշխատակազմ կամ ՀՀ Արմավիրի մարզպետարան՝  
ՏԻ և ՀԳՄ

Հարցերով վարչություն ,հասցեն ք.Արմավիր Աբովյան 71, հեռ. 0237-2-07-70, 2-46-49